Արձանագրություն N 2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/026 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31 Մայիսի 2021թ.
Ժամը 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Ղարիբջանյանը,
Անդամներ՝ Մարիանա Դուրգարյանը և Լենա Միրզախանյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:

Օրակարգ

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/026 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցման և տրամադրվող պարզաբանման մասին

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/026 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Անի Ղարիբջանյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց սույն թվականի մայիսի 28-ին հավանական մասնակցի կողմից ներկայացված հարցադրման վերաբերյալ:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց տրամադրել ներքոնշյալ պարզաբանումը.

Հարցադրում N 1

Հարգելի ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/026 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողով, խնրում եմ պարզաբանել, արդյոք ընթացակարգի շրջանակներում կարելի է հայտ ներկայացնել 100% օտարերկրյա արտադրության ապրանքների համար և այդ պարագայում անհրաժեշտ է արդյոք ներկայացնել հրավեր հավելված 1,1-ը:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից,

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/026 ծածկագրով հրավերում բոլոր պայմանները սահմանված են, մասնավորապես՝ մասնակիցը ներկայացնում է սույն հրավերի 1.1 հավելվածով նախատեսված դիմում-հայտարարությունը, եթե տվյալ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացվող գնային առաջարկը գերազանցում է 1 մլն դրամը և ցանկանում է սույն հրավերով սահմանված պայմաններով ստանալ պայմանագրի գնի 1 տոկոսի չափով փոխհատուցում՝ համաձայն ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված պայմանների:

Հարցադրում N 2

Հարգելի ընթացակարգի հանձնաժողով խնդրում եմ պարզաբանել արդյոք ընթացակարգի շրջանակներում չափաբաժին 1-ի մասով համարժեք կդիտարկվի Լուսաշողի ջերմաստիճանը 2000-3000Կ - փոխարեն 6500Կ ջերմաստիճանով , բայց մնացած պարամետրերով չտարբերվող ապրանքը:

Պարզաբանում N 2

Հարգելի մասնակից,

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 31-րդ կետի 22-րդ ենթակետը, հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների

կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Ընդունվել է որոշում՝

կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

գնահատող անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Լ. Միրզախանյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան